Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Վաչե Գաբրիելյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, փոխվարչապետ

Գործուղման վայրը և ժամկետները

Փարիզ (Ֆրանսիա) 2017 թվականի դեկտեմբերի 13-15-ը

Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

- Դեկտեմբերի 13-14-ը Փարիզ քաղաքում մասնակցելու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հանրային կառավարման բարելավմանն ուղղված ՍԻԳՄԱ ծրագրի 25 ամյակին նվիրված նախարարական կոնֆերանսին:
- Դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ կոնֆերանսի պաշտոնական բացման արարողությունը:
- Կոնֆերանսի նպատակն է աջակցել տնտեսական բարեփոխումներին, նպաստել լավ և արդյունավետ կառավարմանը, ավելի լավ հանրային ծառայությունների միջոցով մրցունակ եւ գործարար միջավայրի ստեղծմանը եւ գործնականում օրենքի գերակայության բարելավմանը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դեկտեմբերի 14-ին պլենար նիստի ընթացքում ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը հանդես է եկել ելույթով: Ելույթի ընթացքում ՀՀ փոխվարչապետը ընդգծել է ՍԻԳՄԱ ծրագրի հետ համագործակցության կարևորությունը՝ նշելով համագործակցության ուղղությունների ընդլայնման և նոր ծրագրերի իրականացման հեռանկարները:

Համաժողովի ընթացքում «Աջակցելով կառուցվածքային տնտեսական բարեփոխումներին արդյունավետ կառավարման միջոցով» թեմայով կազմակերպված կլոր սեղան ձևաչափով քննարկումների շրջանակներում ելույթով հանդես է եկել ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյանը: Նախարարն իր ելույթում ներկայացրել է Հայաստանում պետական ֆինանսների կառավարման բնագավառում իրականացվող շարունակական բարեփոխումները՝ շեշտադրելով ծրագրային բյուջետավորման, ֆիսկալ քաղաքականության, պետական ներքին ֆինանսական հսկողության, պետական գնումների և այլ ոլորտներում իրականացված բարեփոխումները:

ՀՀ ֆինանսների նախարարի կողմից կարևորվել է ինչպես ՏՀԶԿ-ի, այնպես էլ ՍԻԳՄԱ-ի հետ շարունակական արդյունավետ համագործակցությունը, և պայմանավորվածություն է ձեռք բերվել ՍԻԳՄԱ-ի գործիքների միջոցով Հայաստանում իրականացվելիք հետագա բարեփոխումներին աջակցման վերաբերյալ:

Գործուղվողը

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, փոխվարչապետ

Ստորագրությունը, ամսաթիվը

Վաչե Գաբրիելյան 22.12.2017թ.